33-ՐԴ ՆԻՍՏ

6 Նոյեմբերի 1918թ.

Նախագահում է *Գ. Տեր-Խաչատրյանը:*

Օրակարգի հարցերն են.

1. Օրինագիծ արդյունաբերական հիմնական և լրացուցիչ տուրքերի ավելացման մասին.
2. Օրինագիծ Հայաստանի խորհրդի նախահաշվի մասին.
3. Պառլամենտական հանձնաժողովների լրացումների խնդիրը.
4. Կառավարությանն ուղղված հարցումներ.
5. Ընթացիկ գործեր:

Սկզբում արտ[աքին] գործ[ոց] մինիստր Տիգրանյանը և ներքին գործոց մինիստր Արամը պատասխանում են էսդեկ և էսէռ ֆրակցիաների չորս հարցումներին ու Դաշնակցության մեկ հարցման.

1. *Հարց* - Համաձա՞յն է, արդյոք. արտաքին գործոց մինիստրը Մինիստրնախագահի այն հայտարարության հետ, որ մեր արտաքին քաղաքականությունը մնալու է նույնը: Պատասխանում է, որ արտաքին քաղաքականությունը կապված է ընդհանուր քաղաքականության հետ ու որոշվում է կաբինետի կողմից: Հարցի պատասխանը ավելի մանրամասն կլինի կառավարության դեկլարացիայում, որը մոտ օրերս կկարդացվի: Առայժմ հայտարարում է, որ կառավարությունը կաշխատի ազատ պահել ժողովուրդն ու հայրենիքը արտաքին վտանգներից՝ խորհրդի ցուցումներով առաջնորդվելով, իհարկե:
2. *Հարց* - Թիֆլիսի թերթերում տպված է մի լուր, որ իբր Սուրմալուի և Ղամարլուի շրջանները արդեն դատարկված են. ի՞նչ աղբյուրներից է այդ լուրը և ի՞նչ է անում կառավարությունը, որ այդ և նման սուտ լուրեր չտարածվեն:

Մինիստրը պատասխանում է, որ այդ լուրի աղբյուրը մեզ հայտնի չէ, այնպես որ սրան կամ նրան վերագրելու իրավունք չունենք, բայց կառավարությունը կհերքի այդ լուրը:

3. *Հարց* - Ի՞նչ է արել կառավարությունը գաղթականների վերադարձի համար, համաձայն անցյալ նիստի որոշման: Հայտնվում է, որ կրկին դիմել է թուրքաց ներկայացուցչին՝ խորհրդում ընդունված որոշման հիմունքներով:
4. *Հարց* - Ի՞նչ է արվել մեր դպրոցական գործը բարվոք պայմանների մեջ դնելու համար: Պատասխանվում է, որ դպրոցական շենքերը հետզհետե ազատվում են և դպրոցները՝ վերաբացվում:

Անփոփոխ ընդունվում է արդյունաբերական հիմնական և լրացուցիչ տուրքերի ավելացման մասին եղած օրինագիծը:

Խորհրդի նախահաշիվը վերադարձվում է կոմիսիային՝ վերամշակելու: Օրակարգի մյուս խնդիրները հետաձգվում են, և նիստը փակվում է:

«Կառավարության լրաբեր», 12 Նոյեմբերի 1918թ.